

Մամուլի հաղորդագրություն
10 մարտի 2021թ.

ՔՈԱՖ-ը, Դեբետի համայնքապետարանն ու «Գրադարակ գրադարաններ» ՅԿ-ն հիմնում են ժամանակակից գրադարան Դեբետ գյուղում

ԵՐԵՎԱՆ - Մարտի 10-ին «[Յայաստանի մանուկներ](#)» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ), Դեբետի [համայնքապետարանը](#) և «[Գրադարակ գրադարաններ](#)» հասարակական կազմակերպությունը, որ ժամանակակից գրադարաններ է կառուցում Յայաստանի ու Արցախի գյուղական համայնքներում, ՔՈԱՖ-ի երևանյան գրասենյակում ստորագրեցին համագործակցության հուշագիր:

Այս եռակողմ համագործակցության արդյունքում Լոռու մարզի Դեբետի գյուղի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում կհիմնվի բազմաֆունկցիոնալ, ժամանակակից գրադարան, որը բացի զուտ գրադարան լինելուց, նաև կլինի սեմինարների, աշխատարանների ու տարբեր միջոցառումների անցկացման հարմարավետ վայր: Նոր գրադարանը հիմնվում է ՔՈԱՖ-ի «ՍՄԱՐԹ Դեբետ» նախաձեռնության շրջանակներում, որը հավակնում է դառնալ գյուղական համայնքի համապարփակ զարգացման օրինակելի մոդել:

«Մեր ՍՄԱՐԹ Դեբետ նախաձեռնության արդյունքում Դեբետն ամբողջությամբ տրանսֆորմացիոն էնք ՍՄԱՐԹ գյուղի, և, վերափոխելով համայնքապետարանի շենքը, չէինք կարող այնտեղ չկառուցել 21-րդ դարի գրադարան, որի առկայությունը պարզապես անհրաժեշտություն է յուրաքանչյուր համայնքի համար: Ավելին՝ գրավիչ գրադարանը կապահովի նաև համայնքի բնակիչների ավելի մեծ հոսք դեպի համայնքապետարան, ինչը շատ կարևոր է: Այս նախագծի շրջանակներում կարևորում ենք համագործակցությունը հենց «Գրադարակ գրադարաններ» ՅԿ-ի հետ, որն ունի գյուղական համայնքներում ժամանակակից գրադարաններ կառուցելու առաքելություն և փորձ», - նշում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատուրյանը:**

Գրադարանը, որ կզբաղեցնի 100 քմ տարածք, կունենա փոքրիկ սենյակ՝ լռության պայմաններում աշխատելու կամ ուսանելու համար, ինչպես նաև ավելի խոշոր սրահներ միջոցառումների և հանդիպումների համար:

«Այս պահին էլ համայնքապետարանում գործող գրադարանից օգտվողներ կան, բայց այն քիչ մոտիվացնող է, և գրքերի վիճակն էլ շատ լավ չէ, իսկ նոր գրադարանն իր գրավչությամբ, գրքերի տեսականիով կմեծացնի մարդկանց հոսքը դեպի գրադարան», - նշում է Դեբետի համայնքապետ **Աշոտ Ղազարյանը:**



Գրադարանը, որ նախատեսված է միաժամանակ 3-6 տարեկան երեխաների, 7-17 տարեկան դպրոցականների ու 18-ից բարձր անձանց համար, հազեցած է լինելու անհրաժեշտ սարքավորումներով՝ համակարգիչ, պրոյեկտոր, էկրան, բարձրախոսներ, խոսափող, յուրահատուկ ու հարմարավետ կահույք: Գրքերի քանակն աստիճանաբար կաճի՝ 400-ից հասնելով մինչև 4000 անուն գիրք: Հասանելի կլինեն նաև սեղանի խաղեր:

«Այս համագործակցությունը կարևորում ենք երկու հիմնական պատճառով. նախ, ուրախ ենք, որ մուտք ենք գործում մի նոր համայնք ու այսուհետ կարող ենք Լոռու մարզի ավելի շատ բնակիչների սպասարկել, և բացի այդ, սա նաև շահույթ չհետապնդող կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության հաջող փորձ է: Հանուն ավելի լավ Հայաստանի մեր ուժերի համախմբումը պետք է բոլորիս համար առաջնահերթություն դառնա», - ընդգծում է «Գրադարան գրադարաններ» ՀԿ-ի համահիմնադիր և տնօրեն **Արուսիկ Չեյնալյանը**:

Նախագծի արժեքը կազմում է 40,000 ԱՄՆ դոլար: Գրադարանի կառուցման և կահավորման բոլոր ծախսերը հոգում է ՔՈԱՖ-ը, «Գրադարան գրադարաններ» ՀԿ-ն ապահովելու է հաստատության շարունակական ու սահուն գործառնությունը՝ այդ թվում գրադարանավարի մեկ հաստիքի ապահովումը, որը կհամալրվի տեղաբնակ մասնագետի կողմից: Իսկ Դեբետի համայնքապետարանն էլ ապահովելու է գրադարանի շաբաթական 7 օր հասանելիությունն ու հոգալու է գործառնական ծախսերի մի մասը:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները: 2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱԲ նախաձեռնություն: ՍՄԱԲ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՔՈԱՖ ՍՄԱԲ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին:

«Գրադարան գրադարաններ» ՀԿ-ի մասին

«Գրադարան»-ը հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2018 թ. Հայաստանում: Կազմակերպության առաքելությունն է հզորացնել երեխաներին և երիտասարդներին Հայաստանի ու Արցախի գյուղական բնակավայրերում՝ ընթերցանության, ակտիվ ուսման և համայնքային նախագծեր մշակելու համար անվտանգ ու ոգեշնչող տարածքներ ապահովելու միջոցով: Այն հիմնադրվել է Լոռու մարզի Ամրակից գյուղում փորձնական գրադարանային նախագծի հաջող իրականացման արդյունքում: Երկու տարվա ընթացքում կառուցվել է Գրադարանի 4 գրադարան Հայաստանի 3 մարզերում՝ դառնալով հարթակ ուսման և ստեղծարարության համար,



Ներկայումս սպասարկելով ավելի քան 1000 երեխաների, երիտասարդների, ուսուցիչների ու այլ մեծահասակների շուրջ 15 համայնքներում: